

Քիւ 27216  
Մարտ 5, 1981

Հոգեշնորհ  
Տ. Զաւէն Ե. Վրդ. Արզումանեան  
Հովիւ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ  
Նախագահ Եփական Խորհուրդի  
Ուիւնվուտ.

Սիրելի Հայր Զաւէն,

Ստացած ենք Փետրուար 25, 1981 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 15ին գումարուած համայնքիդ Եփական ժողովին մէջ կատարուած է Եփական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Եփական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել Եփական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Եփական Խորհուրդի նոր կազմը, ձեցի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեանատարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Սթիվըն Պարսամեան  
ձորճ Տէվլէթեան  
Փօլ Մուրատ  
Ռիչըրտ Շարարմեան  
Բարլ Պօյանեան  
ձորճ Նազուպեան